ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՅԱՑՈՒՄԸ

Անահիտ Սարգսյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետության հռչակմամբ առաջին հերթին ձևավորվեցին կառավարությունը (Թիֆլիսում), իսկ այնուհետև՝ օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը (Երևանում): 1918 թ. հուլիսի 28-ին վարչապետ Հ. Քաջազնունու կարգադրությամբ արդարադատության նախարար է նշանակվում անկուսակցական, երդվյալ հավատարմատար (փաստաբան) Գ. Տեր-Պետրոսյանը[1]: Այսպիսով, Հանրապետության հռչակումից հետո՝ երկու ամիս անց, կառավարության կառուցվածք մտավ միայն արդարադատության նախարարությունը, սակայն թե ինչ բնույթի էր լինելու այն, պարզ չէր:

1918 թ. օգոստոսի 3-ին Հայաստանի խորհրդի 2-րդ նիստում Հ. Քաջազնունին հրապարակեց իր կառավարության հռչակագիրը, որ հավանություն ստացավ Հայաստանի խորհրդարանում: Այն արդարադատության նախարարությանը վերապահված ոլորտներում կառավարության առջև խնդիր էր դնում «հարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական շրջանառության և իրավական սովորույթների պայմաններին՝ միաժամանակ մասնակից անելով քրեական դատավարությանը ժողովրդի ներկայացուցիչներին»[2]: Գործի անցնելով քաղաքական, տնտեսական, սոցիալական, բարոյահոգեբանական բավականին ծանր պայմաններում՝ կառավարությունը փորձում էր կասեցնել քայքայման գործընթացը, հանել երկիրն անիշխանության վիճակից ու ստեղծել պետական շինարարության համար պայմաններ, այլ կերպ ասած՝ «Անձև քաոսի և ավերակների կույտից նա պետք է ստեղծի կենսունակ և աշխատող մի մարմին»[3]: Կառավարության հռչակագրի դրույթները արդարադատության նախարարության կառավարման ոլորտի համար շատ ընդհանուր էին և անորոշ: Դրա պատճառը հավանաբար այն էր, որ արդարադատության նախարարը նշանակվել էր ընդամենը մի քանի օր առաջ: Միայն Հայաստանի Հանրապետության առաջին արդարադատության նախարարի 1918 թ. օգոստոսի 7-ի կարգադրությունով կազմակերպվեց արդարադատության նախարարություն և սկսվեց նրա գործունեությունը: Արդարադատության նախարարի հաջորդ կարգադրություններով նշանակվեցին և ազատ արձակվեցին հաշտարար դատավորներ ու դատախազ, նոտարներ:

---

[1] Տե՛ս «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, թիվ 1, 1 սեպտեմբերի 1918 թ., «Մինիստր նախագահի կարգադրությունները»:
[2] «Զանգ», թերթ, Եր.,1918, 7 օգոստոսի, թիվ 43:
[3] Նույն տեղում:

Չնայած հանրապետության տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններին՝ արդարադատության նախարարությունը ջանք չէր խնայում կյանքի կոչելու իր առջև ծառացած հիմնական խնդիրները.

1) արդարադատության նախարարության կենտրոնական ապարատի կազմակերպում,

2) անցյալից մնացած դատական մարմինների, դատական իշխանության համակարգի մեջ մտնող այլ հիմնարկությունների կառավարում,

3) հանրապետության դատական համակարգի կառուցման և գործունեության հիմնադրույթների մշակում ու դրանց օրենսդրական իրագործում,

4) արդարադատության նախարարության վրա՝ գործող օրենքներով դրված խնդիրների կենսագործում, այսինքն՝ նախարարության զանազան ոլորտներում իրավասության իրականացում,

5) արդարադատության նախարարության տնօրինությանը հանձնված այլ ոլորտների կառավարում:

Թվարկված խնդիրների մեջ էական էին երկուսը՝ արդարադատության նախարարության կենտրոնական ապարատի կազմակերպումը, քանի որ որպես այդպիսին հանրապետությունում չկար որևէ նախադրյալ, ինչպես նաև հանրապետության դատական համակարգի կառուցման և գործունեության հիմնադրույթների մշակումը ու դրա օրենսդրական իրագործումը: Վերջինս էական էր այնքանով, որ ազդելու էր նորաստեղծ նախարարության բնույթի, գործառույթների, իրավասության, գործադիր ապարատի կառուցվածքի վրա: Այսպիսով՝ նորահռչակ հանրապետության օրենսդիր ու գործադիր իշխանությունների, արդարադատության նախարարության առջև ծառացած խնդիրներից մեկն էլ հանրապետության դատական համակարգի հիմնադրույթների մշակումն ու իրագործումն էր: Միայն այդ խնդրի լուծումից հետո, այսինքն՝ Ալեքսանդր Երկրորդի դատական կանոնադրությունները որպես պաշտոնապես գործող իրավական աղբյուրներ ընդունելուց հետո պարզվեցին նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կենտրոնական ապարատի կառուցվածքի և իրավասության հարցերը: Կենտրոնական ապարատի կառուցվածքը բոլորովին այլ տեսք ուներ, քան նախկինում էր[1]: Սակայն դատական համակարգերի, դատավարական ձևերի նմանությունը պայմանավորել էր դրանց իրավասության ընդհանրությունը՝ շատ չնչին տարբերություններով:

---

[1] Ռուսական կայսրության արդարադատության նախարարությունը 1910 թ. դրությամբ իր կենտրոնական ապարատի կառուցվածքում ուներ հետևյալ օղակները՝ նախարար, նախարարի երկու օգնականները, գլխավոր բանտային վարչությունը, առաջին և երկրորդ դեպարտամենտները, արդարադատության նախարարի հատուկ հանձնարարությունների պաշտոնյաները, Մոսկվայի հատուկ արխիվը: Նախարարության կենտրոնական ապարատի կառուցվածքում գործում էր նաև սահմանազատիչ մասի վարչությունը՝ վարիչի գլխավորությամբ (տե՛ս Свод законов Российской империи, 1910 г., Сос. Норенбергъ, Томы 1-4, книга 5, Учреждение министерство юстиции. հոդված 768-782, էջ 222-226): Օրինքով արդարադատության նախարարի կոչումը կամ պաշտոնը միավորում էր նաև գլխավոր դատախազի և բանտերի հոգաբարձուների խորհրդի նախագահի պաշտոններից բխող լիազորությունները, որոնք կարգավորվում էին ոչ թե «Արդարադատության նախարարության կանոնադրությամբ», այլ ուրիշ օրենսդրական ակտերով: Արդարադատության նախարարին կից գործում էր նախարարի խորհուրդը: Մինչև 1892 թ. նախարարությունն ուներ մեկ դեպարտամենտ: Այնուհետև ստեղծվեց երկրորդը, և նախարարության իրավասության մեջ մտնող գործերը բաժանվեցին երկուսի միջև: Գլխավոր բանտային տեսչությունն իր բարդ համակարգով և բազմաթիվ բանտերով արդարադատությանը հանձնվեց 1895 թ. (տե՛ս ***Ерошкин Н.П.,*** История государственных учереждений дореволюционной России, М.,1983, էջ 210-211):

Առաջին Հանրապետության արդարադատության նախարարության կազմակերպական-կառուցվածքային համակարգի հիմնադրման և կայացման պատմությունը հնարավոր է ներկայացնել երեք աղբյուրների հիման վրա՝ ա) հանրապետության օրենսդիր մարմինների հաստատած առանձին պետական մարմինների «նախահաշիվների ու հաստիքացուցակների» հայտնաբերում և հետազոտում, բ) արդարադատության նախարարության առանձին օղակների ստեղծման մասին օրենքների հայտնաբերում և հետազոտում, գ) Ռուսաստանի կայսրության արդարադատության նախարարությանը վերաբերող այն օրենսդրական ակտերի միջոցով, որոնք գործել են Առաջին Հանրապետությունում:

Արդարադատության նախարարության նոր ձևավորված կենտրոնական ապարատը 1918 թ. ընթացքում ո՛չ իր կառուցվածքով, ո՛չ էլ իր անձնակազմով մեծ չէր, իսկ նախարարությունը չուներ օրենսդրական կարգով հաստատված նախահաշիվ և հաստիքացուցակ: Ավարտուն տեսք չուներ արդարադատության նախարարության այսպես կոչված «տեղական մարմինների» համակարգը:

Գործադիր իշխանության բոլոր մարմիններին, այդ թվում արդարադատության նախարարության կենտրոնական ապարատին գումարային հատկացումներ կատարվում էին Նախարարների խորհրդի 1918 թ. օգոստոսի 16-ի որոշման համաձայն, ըստ որի՝ մինչև օրենսդրական կարգով պետական հաստատությունների նախահաշիվների և հաստիքացուցակների հաստատումը նախարարություններին թույլ էր տրվում անհրաժեշտ ծախսերը կատարել կառավարությանը հատկացված գումարների հաշվին[1]: Այսինքն՝ արդարադատության նախարարության 1918 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսների ֆինանսավորումն իրականացվել է ամենամսյա առանձին պահանջագրերի միջոցով[2]: Ըստ այդ փաստաթղթերի նախարարության կենտրոնական ապարատը իր թվաքանակով և կառուցվածքով մեծ չէր: Այն կազմված էր նախարարից և նրա գրասենյակից, որը բաղկացած էր ընդամենը հինգ պետական ծառայողներից: Գրասենյակը գլխավորում էր գրասենյակի վարիչը: Նախարարի 1918 թ.-ի օգոստոսի 22-ի թիվ 12 կարգադրությունով նախարարությանը կից սահմանվել էր նաև հատուկ հանձնարարությունների պաշտոնյայի հաստիք, որը, սակայն, աշխատավարձ չէր ստանում[3]:

Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 23-ին հաստատած «Նախահաշվների քննության մասին» օրենքով նախարարություններին, այդ թվում արդարադատության նախարարությանը թույլատրվում էր մինչև կառավարությունում հավանություն գտած ու խորհրդարան մտած նախահաշիվների հաստատումը կատարել հաստիքային ծախսերը այդ նախահաշիվների նախագծերի սահմաններում մեկ ամսվա հաշվարկով[4]: Այս կարգով է իրականացվել արդարադատության նախարարության ծախսերի ֆինանսավորումը 1918 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին[5]:

Իր կազմավորման օրվանից արդարադատության նախարարությունը որոշ սկզբունքային և անհետաձգելի հարցեր լուծելուց հետո ձեռնամուխ է եղել նախարարության ֆինանսական նախահաշիվների և հաստիքացուցակների նախագծերի մշակմանը: 1918 թ. այդպիսի նախագծեր մշակվել են երկու անգամ: Առաջինը ավարտվել է 1918 թ. հոկտեմբերին և նույն թվականի հոկտեմբերի 9-ին ներկայացվել է Նախարարների խորհրդի քննությանը, որտեղ հավանության արժանանալով՝ ու-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, g. 1, գ. 2, թ. 16, ինչպես նաև գ. 8, թ. 1:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, g.1, գ. 8, թթ. 4, 21, 46, 55, 79:
[3] Տե՛ս «Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, Երևան, 1918, սեպտեմբերի 1, թիվ 1:
[4] Տե՛ս Հայաստանի Խորհրդի հաստատած օրենքները, 1918, Երևան, էջ 16:
[5] Տե՛ս նույն տեղում, էջ 24:

ղարկվել է օրենսդիր մարմին՝ Հայաստանի խորհուրդ[1]: Ըստ այդ նախագծի՝ նախարարության կենտրոնական ապարատը կազմված էր նախարարից և գրասենյակից: Արդարադատության նախարարին կից գործելու էր նախարարի խորհուրդը[2]: Այդ նախագծերը մշակելիս արդարադատության նախարարությունը կառավարության ցուցումներին համապատասխան ղեկավարվել էր երկու հիմնական դրույթներով. նախ՝ ստեղծել «արդարադատության պատասխանատու գործը» իրականացնելուն ընդունակ դատական կառուցակարգ, և երկրորդ՝ ըստ հնարավորության առավելապես խնայել պետական միջոցները, սակայն առանց արդարադատության պատշաճ իրականացմանը վնաս հասցնելու:

Այդ նախագծով նախատեսվում էր Հայաստանի Հանրապետությունում հիմնել Հայաստանի սենատ (վճռաբեկ դատարան) իրեն կից դատախազական հսկողությամբ, դատական պալատ (վերաքննիչ դատարան), մեկ շրջանային դատարան հանրապետության ամբողջ տարածքի համար, որի նստավայրը լինելու էր Երևանում: Համաձայն այդ փաստաթղթի՝ հաշտարար բաժինների քանակը հանրապետության տարածքում հասնելու էր 11-ի, իսկ քննչական տեղամասերինը՝ 12-ի:

Այս նախագծերը, որ նախատեսված էին 1918 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար, Հայաստանի խորհրդում օրենսդրական հաստատում չստացան: Դրանք նախատեսված էին Բաթումի հաշտության համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը անցած տարածքների համար: Երբ Բաթումի պայմանագիրը հայտարարվեց անվավեր, և Հայաստանի Հանրապետության տարածքները ընդլայնվեցին ավելի քան երկու անգամ, ապա անհրաժեշտություն առաջացավ փոփոխության ենթարկել նաև արդարադատության նախարարության «նախահաշիվների ու հաստիքացուցակի» նախագծերը ինչպես կենտրոնական ապարատի, այնպես էլ արդարադատության նախարարության «տեղական հիմնարկությունների» մասերով: Այդ կապակցությամբ մշակվեց «Արդարադատության նախարարության նախահաշվի և հաստիքացուցակի լրացուցիչ օրինագիծ»[3]: Ըստ վերջինի՝ առաջարկվում էր լրացուցիչ հիմնել նոր հաշտարար բաժիններ ու քննչական տեղամասեր, փոփոխության ենթարկել վճռաբեկ դատարանի և դատական պալատի կազմը և այլն: Միաժամանակ որոշ փոփոխություններ էին նախատեսվում արդարադատության նախարարության կենտրոնական ապարատում. նախարարության գրասենյակի տնօրենի հաստիքի փոխարեն նախատեսվում էր նախարարի օգնականի պաշտոնը, իսկ գրասենյակի փոխտնօրենի փոխարեն՝ գրասենյակի վարիչի պաշտոնը: Գրասենյակին կից պետք է ստեղծվեր իրավաբանական գրադարան: Այդ նպատակով նախարարությունը պահանջում էր հատկացնել գումարներ՝ օրենքների ժողովածուներ և իրավաբանական գրականություն ձեռք բերելու համար:

«Արդարադատության նախարարության նախահաշվի և հաստիքացուցակի լրացուցիչ օրինագիծը» զեկուցվեց Նախարարների խորհրդին 1918 թ. դեկտեմբերի 9-ին: Կառավարության կողմից հավանություն ստանալով՝ դրանք առաջարկվեցին Հայաստանի խորհրդին՝ ի լրումն նախկինում արդեն ներկայացված օրինագծերի[4]: Բայց այս նախագծերը փաստորեն այդպես էլ չհաստատվեցին օրենսդիր մարմնի կողմից: Սակայն արխիվային փաստաթղթերի հետազոտությունը ցույց է տալիս, որ արդարադատության նախարարությունը 1919 թ. ղեկավարվում էր դրանցով: Դրա իրավական հիմքը Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 3-ի «1919 թ. ֆինանսա-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 2, թ. 62:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 8, թթ. 303-305:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 8, թթ. 282-286:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 404, ց. 1, գ. 68, թ. 10:

կան նախահաշիվների և պետական ելումուտքի տախտակը կազմելու, քննելու և հաստատելու մասին» օրենքն էր: Այդ օրենքը բոլոր նախարարություններին և գերատեսչություններին թույլատրում էր 1919 թ. հունվարի 1-ից մինչև մայիսի 1-ը պետական ապարատի կարիքները բավարարելու համար անհրաժեշտ ծախսերն իրականացնել 1918 թ. նախահաշիվների շրջանակում[1]:

«Արդարադատության նախարարության նախահաշվի և հաստիքացուցակի լրացուցիչ օրինագիծը», որ Նախարարների խորհուրդը հաստատեց 1918 թ. դեկտեմբերի 9-ին, նախատեսում էր արդարադատության նախարարությանը կից հիմնել նաև սահմանազատիչ բաժին[2]:

Այսպիսով, 1919 թ. առաջին կեսին արդարադատության նախարարությունը գործել է 1918 թ. նախահաշիվների ու հաստիքացուցակների շրջանակում: Իսկ արդեն 1919 թ. երկրորդ կեսին հաստատվեցին արդարադության նախարարության նոր նախահաշիվներն ու հաստիքացուցակները: 1919 թ. հուլիսի 17-ին Նախարարների խորհրդի ընդունած օրենքով[3] հաստատվեցին արդարադատության նախարարության կենտրոնական և տեղական հիմնարկությունների 1919 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսների ամբողջական նախահաշիվներն ու հաստիքացուցակը[4]: Այդ նախագծերը նախօրոք քննարկվել էին միջգերատեսչական բյուջետային հանձնաժողովում, որը օրենսդրական լիազորություններով օժտված կառավարությանը երաշխավորում էր հաստատել դրանք[5]:

Ըստ այդ փաստաթղթերի՝ նախարարության կենտրոնական և «տեղական հիմնարկությունների» համակարգը հետևյալ տեսքն ուներ՝

1) նախարարության կենտրոնական ապարատ,

2) բարձրագույն դատական հիմնարկություններ՝ Հայաստանի սենատ և դատական պալատ,

3) Երևանի շրջանային դատարան,

4) 26 հաշտարար բաժիններ, մեկ քննչական-հաշտարար բաժին,

5) 27 քննչական տեղամասեր,

6) նախարարությանը կից սահմանազատիչ բաժին[6]:

Ըստ նոր հաստիքացուցակի՝ նախարարության կենտրոնական ապարատն ուներ հետևյալ կառուցվածքը՝ ա) արդարադատության նախարար, նրա օգնական, բ) նախարարի խորհուրդ, որն այս անգամ կազմված էր նախարարից, նրա օգնականից, Հայաստանի սենատի նախագահից և ավագ դատախազից, դատական պալատի նախագահից և դատախազից, Երևանի շրջանային դատարանի նախագահից ու դատախազից և վերջապես՝ Արևմտյան Հայաստանի գործերով խորհրդականից, գ) արդարադատության նախարարության գրասենյակ, որը կազմված էր տնօրենից, փոխտնօրենից, Արևմտյան Հայաստանի գործերով խորհրդականից, գործավարից, վերջինիս օգնականից, հաշվապահից և օժանդակ ծառայողներից[7]:

---

[1] Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1919, էջ 39:

[2] Բաժինը կազմված էր լինելու վարիչից, գլխավոր հողաչափից, երկու հողաչափերից, գծագրողից, գրասենյակային օժանդակ ծառայողներից (տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 8, թ. 296):

[3] ՀՀ կառավարությունը վարչապետի գլխավորությամբ 1919 թ. ապրիլի 27-ից մինչև օգոստոսի 1-ը ուներ օրենսդրական լիազորություն, որը կառավարությունն ստանում էր օրենսդիր մարմնից: Հետևաբար, այս ժամանակահատվածում նախարարների կողմից Նախարարների խորհուրդ մտցված օրինագծերը հաստատվելուց հետո ստանում էին օրենքի ուժ:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 69, թ. 106:

[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 69, թ. 109:

[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 69, թ. 111-119:

[7] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 69, թ. 115:

1919 թ. հուլիսի 17-ին Նախարարների խորհրդի ընդունած օրենքով արդարադատության նախարարության կենտրոնական և տեղական հիմնարկությունների կազմակերպական կառուցվածքը մնաց անփոփոխ մինչև 1920 թ. երկրորդ կիսամյակը: 1920 թ. հուլիսի 30-ին կառավարությունը օրենսդրական կարգով նորից վավերացրեց արդարադատության նախարարության 1920 թ. երկրորդ կիսամյակի նախահաշիվն ու հաստիքացուցակը[1]: Այդ փաստաթղթով նախարարության կենտրոնական ապարատում, համաձայն Հայաստանի պառլամենտի 1920 թ. մարտի 15-ին ընդունած օրենքի, ավելացել էր արևմտահայության իրավագիտական բաժինը, իսկ նախարարի գրասենյակը վերանվանվել էր նախարարի դիվանի՝ տեսուչի գլխավորությամբ[2]: Այս և նախորդ նախահաշիվներում բացակայում էր բանտային տեսչությունը, որը Նախարարների խորհրդի 1919 թ. հունվարի 7-ի որոշմամբ ներքին գործերի նախարարության ենթակայությունից հանվել և հանձնվել էր արդարադատության նախարարության կառավարմանը[3]: Պատճառն այն էր, որ բանտային տեսչության նախահաշիվներն ու հաստիքացուցակները կազմվում էին արդարադատության նախահաշիվներից ու հաստիքացուցակներից առանձին, հետևաբար համապատասխանաբար ֆինանսավորվում էին առանձին:

Այսպիսով, նորահռչակ պետության պետական ապարատի զարգացումը արդարադատության նախարարության օրինակով հաստատում է, որ 1918 թ., չունենալով ոչ մի կազմակերպական-կառուցվածքային նախադրյալ, այդ նախարարությունն արդեն 1920 թ.-ին ուներ բավականին ձևավորված և կայացած կենտրոնական ապարատ՝ նախարարի գլխավորությամբ: Ապարատը ներառում էր հետևյալ կառուցվածքային օղակները՝ ա) արդարադատության նախարար, նրա օգնական. բ) նախարարի խորհուրդ, գ) արդարադատության նախարարության դիվան (գրասենյակ), գ) արևմտահայության իրավագիտական բաժին, դ) բանտային տեսչություն: Արդարադատության նախարարին՝ որպես գլխավոր դատախազի ենթարկվում էր նաև դատախազական հսկողության համակարգը, որը ուներ հետևյալ կառուցվածքը՝ ա) Հայաստանի Սենատին կից դատախազական հսկողություն՝ ի դեմս ավագ դատախազի և նրա օգնականի: 1920 թ. հոկտեմբերի 26-ի օրենքով սահմանվեց նաև Սենատի ռազմական ավագ դատախազի պաշտոնը, որը ենթարկվելու էր ռազմական նախարարին և կատարելու էր գլխավոր ռազմական դատախազի գործառույթները, բ) դատական պալատին կից դատախազական հսկողություն՝ ի դեմս դատախազի և նրա երկու օգնականների, գ) Երևանի շրջանային դատարանի դատախազական հսկողություն՝ ի դեմս դատախազի և նրա հինգ օգնականների, դ) Կարսի և Ալեքսանդրապոլի շրջանային դատարանների դատախազական հսկողություն՝ ի դեմս դատախազի և նրա երկու օգնականների[4]:

Հանրապետության հռչակումից հետո կառավարության կառուցվածքում ստեղծվեց արդարադատության նախարարությունը, և մի քանի ուղղություններով տարվեցին նախարարության հիմնադրման աշխատանքներ: Նորահռչակ պետության պետական ապարատի զարգացումը արդարադատության նախարարության օրինակով հաստատում է, որ 1918 թ., չունենալով ոչ մի կազմակերպական-կառուցվածքային նախադրյալ, այդ նախարարությունն արդեն 1920 թ. ուներ բավականին ձևավորված և կայացած կենտրոնական ապարատ՝ նախարարի գլխավորությամբ:

---

[1] ՀՀ կառավարությունը վարչապետի գլխավորությամբ 1920 թ. մայիսի 5-ից մինչև հանրապետության անկումը՝ դեկտեմբերի 2-ը, օրենսդրական լիազորություններով օժտված գործադիր մարմնի էր, որը սահմանվել էր հատուկ օրենքով:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 119, թթ. 1-5:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 3:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 206, ց. 1, գ. 119, թթ. 1-8:

УЧЕРЖДЕНИЕ И СТОНОВЛЕНИЕ ОРГАНИЗАЦИОННО-СТРУКТУРНОЙ СИСТЕМЫ МИНИСРЕТСТВА ЮСТИЦИИ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (1918-1920)

Анаит Сарксян
Аспирант кафедры теории и истории государства и права ЕГУ

Министерство юстиции Первой Республики Армения была учреждена через два месяца провозглашения Республики. Несмотря на тяжелие условия Республики, была проведена большая работа по нескольким направлениям по созданию аппарата управления министерства. В итоге не имевшим ни одной организационно-структурной предпосилки, в 1920 г. это министерство имело достаточно организованний центральный аппарат во главе министра юстиций.

ESTABLISHMENT AND STRENGTHENING OF THE ORGANIZATIONAL AND STRUCTURAL SYSTEM OF THE MINISTRY OF JUSTICE OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA

Anahit Sargsyan
PhD Student ot the YSU Chair of Theory of State and Law

Ministry of Justice was established in the system of the Government only after two months of establishment of the Republic of Armenia. Despite the complicated conditions of economic and political life in the Republic, the establishment of the Ministry of Justice was fulfilled in several directions. Development of state machine of the newly established state according to the example of the Ministry of Justice states, that in 1918 the mentioned Ministry had no organizational and structural prerequisites and in 1920 it already had sufficiently formed and stable central system headed by the Minister.

Բանալի բառեր – *նախարար, արդարադատություն, դատախազ, կառավարում, ընդհանուր հսկողություն, կենտրոնական ապարատ, նախադրյալներ, սենատ, շրջանային դատարան, գրասենյակ-դիվան, նախարարի խորհուրդ*
Ключевые слова – *министр, юстиция, прокурор, управление, общий надзор, центральный аппарат, предпосылки, сенат, окружной суд, канцелария, совет министра*
Key words – *minister, justice, prosecutor, government, general control, central system, prerequisites, Senate, Regional Court, office, Council of the Minister*